Международная
организация
труда

ԱՇԽԱՏԱՆՔ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Հրատարակվել է Ռուսաստանի Դաշնության
Միգրացիոն ծառայության տեղեկատվական աջակցությամբ

Սույն ուղեցույցը մշակվել է Եվրամիության (ԵՄ) կողմից ֆինանսավորվող Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) «Միգրանտ աշխատողների պաշտպանությունը Ռուսաստանի Դաշնությունում և միգրացիայի դրական ազդեցության ընդլայնումը Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում:

Ուղեցույցում արտահայտված հեղինակների տեսակետները կարող են չարտահայտել ԱՄԿ–ի կամ ԵՄ-ի դիրքորոշումը:

Այցելե՛ք www.ilo.ru ինտերնետային կայք:

Հրատարակված է միգրացիոն օրենսդրության փոփոխություններով առ 25 մարտի 2011թ.

Ժամանում Ռուսաստան

Ազատը, Վահեն և Գայանեն հայրենակիցներ են: Վահեն և Գայանեն ամուսիններ են: Նրանք Ռուսաստան են եկել գումար վաստակելու նպատակով: Բոլորն էլ առաջին անգամ են Ռուսաստան եկել, բայց ուշադիր ուսումնասիրել են այս գրքույկը և համոզված են, որ ամեն ինչ ճիշտ կանեն:

Վայրէջքից մի փոքր առաջ ուղեկցորդուհին բոլոր օտարերկրյա քաղաքացիներին բաժանեց միգրացիոն քարտերի ձևաթղթեր:



! **Ռուսաստան ժամանելիս անհրաժեշտ է լրացնել միգրացիոն քարտը**: Այն կարելի է անվճար ստանալ ուղեկցորդից (օդանավի, գնացքի կամ նավի) կամ անցագրային կետում: Տեղեկությունները լրացվում են համաձայն անձնագրում նշված տվյալների՝ ռուսերեն լեզվով կամ լատինատառ, եթե օտարերկրացին չի տիրապետում ռուսերեն լեզվին: Այցի նպատակը՝ «**Աշխատանք**»: Այցի տևողությունը՝ ժամանման ամսաթվին գումարած **90 օր:**

Սահմանին

Օդանավակայանում բոլոր ժամանող օտարերկրացիները ենթարկվում են անցագրային ստուգման: Սահմանապահը համեմատում է անձնագրերի տվյալները միգրացիոն քարտերի հետ:

-Ի՞նչ նպատակով եք եկել,- հարցրեց նա:

- Աշխատելու ենք,- պատասխանեց Ազատը:

-Անցեք,– ասաց սահմանապահը և նրան վերադարձրեց անձնագիրը և միգրացիոն քարտի կեսը:

! Անցագրային կետում անհրաժեշտ է ներկայացնել անձնագիրը և լրացրած միգրացիոն քարտը: Ծառայողը ժամանման նշում կդնի և Ձեզ կվերադարձնի միգրացիոն քարտի «Բ» մասը, որը պետք է պահել մինչև մեկնելը:

Ժամանման նշումով միգրացիոն քարտը փաստաթուղթ է, որը հաստատում է Ռուսաստանում **մինչև 90 օր** մնալու Ձեր իրավունքը: Այն կորցնելու դեպքում անհրաժեշտ է անհապաղ դիմել միգրացիոն ծառայություն՝ կրկնօրինակը ձևակերպելու համար:

Նաև պահպանեք տոմսը, որով դուք ժամանել եք:

Ժամանեցինք: Ի՞նչ անել հետո

Ազատը եկել է մեքենաշինական գործարանում աշխատանքի տեղավորվելու համար: Այնտեղ աշխատում է իր եղբայրը, որն ապրում է հանրակացարանում: Վահեն դեռ չի որոշել, թե որտեղ և ինչ է աշխատելու, իսկ Գայանեն հաստատ գիտի, որ ձևակերպելու է պատենտ և փնտրելու է հավաքարարի կամ դայակի աշխատանք:

! Նախապես նայեք ինտերնետում, թե ինչպիսի հարմար պայմաններ կան ապրելու համար այն վայրում, ուր պատրաստվում եք մեկնել: Ժամանելով Ռուսաստան՝ անհրաժեշտ է բնակության վայր գտնել այնքան ժամանակով, որքան որ պատրաստվում եք մնալ: Դա անհրաժեշտ է հնարավորինս արագացնել, քանի որ **7 աշխատանքային օրվա ընթացքում** դուք պետք է միգրացիոն հաշվառման կանգնեք:

Ընդունող կողմը անձ կամ կազմակերպություն է, որը ձեզ կկանգնեցնի միգրացիոն հաշվառման: Ընդունող կողմը կարող է լինել բնակարանի տերը կամ ձեր գործատուն, եթե դուք բնակվելու եք հանրակացարանում կամ ձեր աշխատանքի վայրում:

Եթե արդեն գիտեք, թե որտեղ եք աշխատելու և Ձեր գործատուն ունի հանրակացարան, ապա պետք է անմիջապես ուղևորվել այնտեղ: Եթե դուք պետք է աշխատատեղ փնտրեք, ապա ընդունող կողմը կլինի այն անձը, ում մոտ ապրելու եք վարձով:

Բնակավայրի վարձակալման մասին պայմանավորվելիս պետք է միանգամից զգուշացնել բնակարանի տիրոջը, որ Ձեզ կանգնեցնի միգրացիոն հաշվառման:

Միգրացիոն հաշվառումը գործատուի մոտ

Ազատը եկել է հարցազրույցի իր ապագա գործատուի մոտ:

-Մեզ անհրաժեշտ են փականագործներ, խառատներ: Երիտասարդները չեն հաճախում ուսումնարաններ՝ միջին մասնագիտական կրթություն ստանալու համար,– դժգոհեց կադրերի բաժնի պետը,– այդ պատճառով մենք ներգրավում ենք այլ քաղաքների կամ օտարերկրյա քաղաքացիներին: Բնակվել կարող եք գործարանին կից հանրակացարանում:

Ըստ հանրակացարանի հասցեի Ձեզ կկանգնեցնենք միգրացիոն հաշվառման: Այնուհետև կձևակերպենք աշխատանքի թույլտվությունը:

-Ի՞նչ է պահանջվում ինձանից,- հարցրեց Ազատը:

-Անձնագրի պատճեն և միգրացիոն քարտը հիմա կպատրաստենք, այնուհետև փոստով կուղարկենք, ընդամենը այսքանը: Մինչև թույլտվությունը պատրաստ չլինի, մենք ձեզ աշխատանքի թողնելու իրավունք չունենք: Այնպես որ, պետք է սպասել:

! Եթե դուք բնակվելու եք հանրակացարանում կամ աշխատավայրի այլ բնակելի տարածքում, ապա գործատուն կարող է գրանցել Ձեր միգրացիոն հաշվառումն ըստ Ձեր բնակության հասցեի: Նա պետք է անձամբ կամ փոստային ծառայության միջոցով տեղեկացնի միգրացիոն ծառայությանը:

Գալով գործատուի մոտ՝ դուք պետք է ներկայացնեք անձնագիրը և միգրացիոն քարտը, որոնցից կարվեն կրկնօրինակներ: Այդ կրկնօրինակները ծանուցման հետ միասին ուղարկվում են Ռուսաստանի դաշնային միգրացիոն ծառայություն (ԴՄԾ):

Անձամբ ներկայանալու դեպքում գործատուն կարող է Ձեզանից խնդրել Ձեր միգրացիոն քարտի բնօրինակը, որտեղ նշում կարվի միգրացիոն հաշվառման մասին, իսկ փոստով ուղարկելու դեպքում դա անհրաժեշտ չէ:

Միգրացիոն հաշվառման կանգնելուց հետո գործատուն Ձեզ կվերադարձնի հաշվառման կանգնելու նշումով ժամանման մասին ծանուցման բլանկի Ձեր հատվածը, որի վրա նշված է հաշվառման կանգնելու փաստը և միգրացիոն քարտը, եթե նա նախապես այն ներկայացրել էր Ռուսաստանի ԴՄԾ:

Միգրացիոն հաշվառումը ըստ բնակության վայրի

Հանրակացարանում ապրելու տեղ չկար, սակայն Գայանեն գտավ մի կնոջ հեռախոսահամար, ում մոտ ժամանակին բնակվել էր իր քույրը: Մարիա Իվանովնան մենակ էր ապրում և սենյակները վարձով հանձնում էր եկվորներին: Այդ իսկ պատճառով նա լավ գիտեր միգրացիոն հաշվառման կանոնները:

Հենց որ երիտասարդ զույգը հայտնվեց շեմին, և նրանք պայմանավորվեցին

սենյակի համար, Մարիա Իվանովնան նրանցից խնդրեց անձնագրերի և միգրացիոն քարտերի պատճենները:

-Գնացե՛ք և պատճենահանե՛ք, իսկ վաղը ես ինքս ձեզ կկանգնեցնեմ հաշվառման միգրացիոն ծառայությունում,- ասաց նա:

! Ընդունող կողմը անձամբ կամ փոստով ծանուցում է միգրացիոն ծառայությանը: Անձամբ կամ փոստային ծառայության միջոցով: Անձամբ ներկայանալու դեպքում անհրաժեշտ է ներկայացնել անձնագրի պատճեն, միգրացիոն քարտի պատճեն և/կամ բնօրինակը և ժամանման մասին լրացված ծանուցումը:

Ընդունող կողմը միգրացիոն հաշվառման կանգնեցնելուց հետո Ձեզ կվերադարձնի միգրացիոն քարտը և հաշվառման կանգնելու նշումով ժամանման մասին ծանուցման բլանկը:

Ձեզանից նաև կարող է պահանջվել հարկային հաշվառման կանգնել Ռուսաստանում կացության վայրի Դաշնային հարկային տեսչության (ԴՀԾ) ծառայությունում: Թե ինչի համար է սա հարկավոր, կներկայացնենք ավելի ուշ:

Աշխատանք փնտրե՞լ, թույլտվությու՞ն, թե՞ պատենտ ստանալ

Որոշում կայացնելը բարդ խնդիր է: Ինչի՞ց սկսել: Ստանալ թույլտվություն, թե՞ գտնել գործատու, իսկ միգուցե ձեռք բերել պատենտ:

-Տանն աշխատելու համար պատենտն ամենահարմարն է,– ասում է Գայանեն,- բացի այդ այն տրվում է առանց քվոտայի, չնայած դրա համար պետք է վճարել նախօրոք:

-Կազմակերպությունում դրանով աշխատել չի կարելի: Պահանջվում է աշխատանքի թույլտվություն,- պատասխանեց Վահեն,- ես վաղը կգնամ աշխատանք փնտրելու:

-Միգուցե միանգամից աշխատանքի թույլտվությունը ձևակերպենք,- հարցրեց Գայանեն: Քանի որ մենք առանց վիզայի ենք եկել և թույլտվությունը կարող ենք ստանալ ինքներս:

-Ի՞նչ իմաստ ունի: Երեք ամիս հետո պետք է այն երկարացվի կամ պետք է նորը ստանանք: Ավելի լավ է ես միանգամից մեկ տարվա համար ձևակերպեմ,- կտրուկ հակադրվեց ամուսինը:



! Աշխատանքի թույլտվություն ստանալ ինքնուրույն, թե՞ սկզբից փնտրել գործատուին՝ կախված է այն բանից, թե որքան ժամանակ եք դուք պլանավորում մնալ Ռուսաստանում: Եթե այդ ժամանակահատվածը չի գերազանցում երեք ամիսը, ապա կարելի է ստանալ թույլտվություն, այնուհետև տեղավորվել աշխատանքի ցանկացած գործատուի մոտ: Եթե դուք պլանավորում եք աշխատել երկար ժամանակահատվածով, ապա նպատակահարմար է սկզբից գտնել աշխատանք, այնուհետև գործատուի մասնակցությամբ միանգամից ամբողջ ժամանակահատվածի համար ձևակերպել աշխատանքի թույլտվությունը:

Եթե դուք մտադիր եք աշխատել քաղաքացիների տանը կամ ամառանոցում, ապա ամենալավ տարբերակը պատենտ ձեռք բերելն է: Իհարկե, աշխատել պատենտով կարելի է միայն գործատուի անձնական կարիքների համար, բայց ոչ ձեռնարկատիրական գործունեության ոլորտում:

Ո՞ւմ մոտ գնալ աշխատելու

Առավոտյան Վահեն մեկնեց տաքսիների կայան, որպեսզի տեղեկանա, թե արդյո՞ք նրանք վարորդի կարիք ունեն, թե ոչ: Վարորդների կարիքը կար, բայց ձեռնարկությունը ներառված չէր քվոտայի մեջ և այդ իսկ պատճառով իրենց աշխատողների համար թույլտվություն չէին կարող ձևակերպել:

Վահեն մտավ սննդամթերքի շուկա, սակայն այնտեղ նրան պատասխանեցին, որ իրենք ունեն հաստատված բաժնեմաս, որը հավասար է զրոյի:

-Այդ ի՞նչ բաժնեմաս է, եթե այն չկա,- մտածեց Վահեն և շարունակեց իր ճանապարհը: Նա մտավ զբաղվածության պետական ծառայություն: Այնտեղ նրան խորհուրդ տվեցին թափուր աշխատատեղեր փնտրել «Աշխատանք Ռուսաստանում» վեբ կայքում: Մի խոշոր առևտրական ընկերության անհրաժեշտ էին կահույք հավաքողներ:

-Նրա մոտ հաստատ ամեն ինչ օրինական է, և կա քվոտա,– որոշեց Վահեն և պայմանավորվեց հանդիպման համար:

! Գործատու ընտրելու ժամանակ հարկավոր է հիշել, որ Ռուսաստանում օտարերկրյա քաղաքացիներին աշխատանքի ընդունելու ժամանակ կան սահմանափակումներ: Դրանք կարող են լինել առանձին մասնագիտություններ կամ պաշտոններ (ինքնաթիռի անձնակազմի ղեկավար կամ նավատորմի կապիտան), կամ էլ մի ամբողջ գործունեության տեսակ (դեղորայքի, ալկոհոլի մանրածախ վաճառք, առևտուր շուկայում), կամ էլ առանձին կազմակերպություններ (միջուկային օբյեկտներ): Գոյություն ունեն նաև աշխատանքային գործունեության ընդհանուր սահմանափակումներ՝ լիցենզիաներ, հատուկ իրավունքներ և այլն:

Երեք ամսից ավելի ժամանակահատվածով աշխատանքի թույլտվություն ձևակերպելու նպատակով անհրաժեշտ է **գործատուի հետ պայմանագրի նախագիծը** ներկայացնել միգրացիոն ծառայություն, սակայն այն գործատուի հետ, ով ներառված է օտարերկրյա աշխատողների համար աշխատատեղերի ցանկի մեջ (քվոտայի մեջ): Աշխատատեղերի այդ ցանկին ծանոթանալու համար պետք է այցելել «Ռոստրուդի» վեբ կայքը (**www.trudvsem.ru**):

Եթե գործատուն ներառված չէ այդ ցանկի մեջ, ապա նա կարող է օտարերկրյա աշխատողներին վարձել միայն նրանց կողմից ինքնուրույն ձեռք բերված աշխատանքի թույլտվության հիման վրա՝ ոչ ավելի, քան երեք ամիս ժամանակահատվածի համար:

Այս պահանջը չի գործում ֆիզիկական անձ-գործատուների մոտ պատենտի հիման վրա աշխատելու դեպքում:

Աշխատանքի թույլտվություն գործատուի հետ

Վահեն հանդիպում է իր ապագա գործատուի հետ:

-Անձնագիր կա, միգրացիոն հաշվառում կա: Կրթության մասին փաստաթուղթը...- կադրերի բաժնի աշխատակիցը դասավորում էր ներկայացված փաստաթղթերը,- այսպիսի աշխատանքի համար չի պահանջվում, իսկ եթե մենք Ձեզ վերցնեինք տնտեսագետի պաշտոնի համար, ապա առանց դիպլոմի ոչ մի կերպ չէր լինի: Եվ ստիպված կլինեիք ստանալ տեղեկանք ռուսական կրթությանը համարժեք լինելու վերաբերյալ: Իսկ վարպետը կարող է վկայականով էլ աշխատել:

Վահեն հանձնարարությունների մեծ ցուցակով վերադարձավ տուն. այսօր՝ թարգմանել անձնագիրը ռուսերեն, վավերացնել այն նոտարի մոտ, վճարել տուրք աշխատանքի թույլտվության տրամադրման համար: Վաղը՝ ստորագրել ընկերության աշխատակցին փաստաթղթերը հանձնելու վերաբերյալ լիազորագիրը և աշխատանքային պայմանագիրը:

! Աշխատանքային գործունեության իրականացումն առանց աշխատանքի թույլտվության հանգեցնում է վարչական պատասխանատվության՝ տուգանքի տեսքով: Ոչ միանգամյա խախտման դեպքում սահմանվում է արտաքսում և աշխատանքային գործունեության վրա արգելք հինգ տարի ժամկետով:

Աշխատանքի թույլտվության և պայմանագրի մեջ պետք է նշված լինի այն ընկերությունը, որտեղ դուք աշխատում եք և այն մասնագիտությունը կամ պաշտոնը, որով դուք պատրաստվում եք աշխատել:

Աշխատանքի թույլտվություն տալու համար, միգրացիոն ծառայությունը կարող է փաստաթղթերի փաթեթը և պայմանագրի նախագիծը անմիջապես օտարերկրյա քաղաքացուց չընդունել՝ վերջինիս կողմից կեղծ փաստաթղթեր ներկայացնելու մտավախությունից ելնելով: Դա հարկավոր է ճշտել Ռուսաստանի ԴՄԾ տարածքային մարմիններում՝ ըստ ժամանման վայրի:

Գործատուի միջոցով աշխատանքի թույլտվություն ստանալու դեպքում անհրաժեշտ է ձևակերպել գրավոր լիազորագիր գործատուի ներկայացուցչին փաստաթղթերի հանձնումն ապահովելու համար: Թույլտվությունը Ձեզ անձամբ կտան:

Բժշկական տեղեկանք

Երեկ Վահեն ստացավ աշխատանքի թույտվություն: Կադրերի բաժնի աշխատակցուհին նրան հանձնեց պլաստիկ քարտ և զգուշացրեց.

-Դուք ունեք մեկ ամիս, որպեսզի անցնեք բժշկական հետազոտություն, ստանաք տեղեկանքները և դրանք ներկայացնեք Ռուսաստանի ԴՄԾ: Եթե չհասցնեք, ապա աշխատանքի թույտվությունը չեղյալ կլինի, և մենք ստիպված կլինենք ձեզ աշխատանքից հեռացնել:

ՄԻԱՎ-ի հարուցիչի, թմրամոլության բացակայության մասին բժշկական եզրակացությունը պետք է Ձեզ հանձնվի պետական կամ քաղաքային բժշկական հաստատությունների կողմից, որոնք ներառված են հաստատված ցանկում (ճշտեք Ռոուսաստանի ԴՄԾ տարածքային մարմիններում): Այլ բժշկական հաստատությունների կողմից տրված փաստաթղթերը կարող են չընդունվել Ռուսաստանի ԴՄԾ-ի կողմից:

Բժշկական եզրակացության մեջ պետք է նշված լինի, որ դուք չեք տառապում թմրամոլությամբ և այնպիսի վարակիչ հիվանդություններով, որոնք վտանգ են ներկայացում շրջապատի համար՝ Լեպրա (Հանսնի հիվանդություն), տուբերկուլյոզ, սիֆիլիս, խլամիդիմայի լիմֆոգրանուլեմա (վեներական), շանկրոիդ:

ՄԻԱՎ-ի հարուցիչի բացակայության մասին վկայականն առանձին փաստաթուղթ է, որը կազմվում է հաստատված ձևով՝ ռուսերեն և անգլերեն լեզուներով:

Հաջորդ օրը Վահեն գնաց պետական հիվանդանոց բժշկական հետազոտություն անցնելու համար, պարզվեց, որ այդ ծառայությունը վճարովի է:

-Դա ոչինչ,- ասաց նրան Գայանեն,- այ եթե դու աշխատեիր դպրոցում կամ որպես խոհարար, դու ստիպված կլինեիր այստեղ ստանալ սանիտարական գրքույկ:

! Բժշկական եզրակացությունը և վկայականը պետք է ներկայացվեն միգրացիոն ծառայություն աշխատանքի թույլտվություն ստանալուց հետո, **30 օրվա** ընթացքում: Ռուսաստանի ԴՄԾ-ի տարածքային մարմնի վեր կայքում կամ հեռախոսով ճշտեք, որ հասցեով և ինչպիսի փաստաթուղթ է անհրաժեշտ ներկայացնել:

Այն աշխատողները, որոնց գործունեությունը կապված է սննդամթերքի և խմելու ջրի, երեխաների դաստիարակության և ուսուցման, բնակչության կոմունալ և տնային սպասարկման հետ, պարտավոր են անցնել նախնական և պարբերական բժշկական հետազոտություններ, նրանց համար բացվում է բժշկական գրքույկ:

Ինֆեկցիոն հիվանդությունների բացահայտումը կարող է հիմք հանդիսանալ երկրում անցանկալի մնալու լինելու մասին որոշում ընդունելու համար: ՄԻԱՎ-ի հարուցիչը հայտնաբերելու դեպքում Ձեզ կարող են արտաքսել երկից:

---

*Մոսկվայում անհրաժեշտ է ստանալ շրջանային կառավարման առողջապահության ղեկավարի տեղակալի կողմից ստորագրված բժշկական եզրակացություն, որը տրվում է բժշկական տեղեկանքների հիման վրա:

Աշխատանքի թույլտվություն առանց գործատուի

Մեկ շաբաթ անց Մարիա Իվանովնայի բնակարանում հայտնվեց ևս մեկ բնակիչ: Բագրատը հենց նոր է ավարտել ռուսական բուհը՝ տեղեկատվության պաշտպանության ինժեների մասնագիտությամբ: Նա այցելել է իր հարազատներին, բայց պատրաստվում է մնալ և աշխատել Ռուսաստանում: Կուրսում նա լավագույններից մեկն էր, այդ իսկ պատճառով նրան հրավիրեցին աշխատել համակարգչային ընկերությունում այն պայմանով, որ նա աշխատանքի թույլտվությունը կստանա ինքնուրույն: Բագրատը Ռուսաստանի ԴՄԾ-ի վեբ կայքից ներբեռնեց աշխատանքի թույլտվության դիմումը, վճարեց տուրքը և, բնակարանի տիրոջից ճշտելով Ռուսաստանի ԴՄԾ-ի տեղական բաժնի հասցեն, որտեղ տան տերը հաշվառում է իր բոլոր բնակիչներին, գնաց այնտեղ:

! **Ա**ռանց պայմանագիր ներկայացնելու, աշխատանքի թույլտվություն կարելի է ստանալ ինքնուրույն, Ռուսաստան ժամանելու օրից սկսած **ոչ ավելի քան 90 օրվա համար**:

Դիմումը, անձնագիրը, միգրացիոն քարտը և տուրքի վճարման անդորրագիրը անհրաժեշտ է ներկայացնել Ռուսաստանի ԴՄԾ շրջանային մարմին՝ ըստ բնակության (միգրացիոն հաշվառման) վայրի:

Եթե այդպիսի թույլտվության գործողության ընթացքում կնքվի պայմանագիր **90 և ավելի օր** տևողությամբ, ապա անհրաժեշտ է ներկայացնել այն միգրացիոն ծառայություն՝ թույլտվությունը երկարացնելու համար (նոր թույլտվություն ստանալու համար)*:

90 օրից պակաս աշխատանքի թույլտվություն ձևակերպելիս, բժշկական եզրակացություն և վկայական չի պահանջվում, սակայն թույլտվությունը երկարացնելու ժամանակ այս փաստաթղթերը պետք է ևս ներկայացնել:

*Օրենսդրության մեջ կա անորոշություն, թե արդյոք պետք է տրվի նոր թույլտվություն (ԴՄԾ-ի թիվ 36 հրամանի համաձայն), թե նախկինում տրված թույլտվությունը պետք է երկարացվի (կետ 7.1 էջ 13.1, Դաշնային օրենքի թիվ 115-ԴՕ):

-Տվեք ինձ ձեր անձնագիրը, միգրացիոն քարտը, հաշվառման բլանկի կտրոնը,- ասաց Ռուսաստանի ԴՄԾ աշխատակիցը Բագրատին:

Այնուհետև նա Բագրատին վերադարձրեց դիմումի ընդունման նշումով պատժեն և ավելացրեց.

-Ստանալու համար կգաք անձամբ՝ անձնագրով, 10 օր հետո, իսկ ավելի լավ կլինի 14 օր հետո: Մենք չափազանց շատ դիմումներ ունենք: Քվոտան ձեզ վրա չի տարածվում, որովհետև ձեր մասնագիտությունը ներառված է բարձր որակի մասնագիտությունների հաստատված ցանկում: Սակայն, դուք պետք է աշխատեք միայն այդ մասնագիտությամբ:

! Ռուսաստանի միգրացիոն օրենսդրությունը արտոնություններ է նախատեսում օտարերկրյա աշխատողների առանձին կատեգորիաների համար: Դաշնային օրենքում ներկայացված է այն անձանց ցանկը, որոնց համար աշխատանքի թույլտվություն չի պահանջվում: Բարձր որակավորում ունեցող մասնագետների համար, որոնք վաստակում են տարեկան 2 մլն ռուբլուց ավելի գումար, նախատեսված է ներգրավման հատուկ կարգ: Բացի այդ, գոյություն ունի տարեկան հաստատվող մասնագիտությունների ցանկ, որոնց համար աշխատանքի թույտվությունը տրվում է առանց քվոտաները հաշվի առնելու: Այդ ցանկը կարելի է գտնել Ռուսաստանի առողջապահության և սոցիալական զարգացման նախարարության կայքում **(www.minsdravsoc.ru):**

Պատենտի ստացում

Տնային աշխատողների և դայակների թափուր աշխատատեղերը ոչ հաճախ են հայտնվում զբաղվածության պետական ծառայությունում, սակայն Ռուսաստանում տնային աշխատողների հավաքագրման համար գործում են շատ գործակալություններ, որոնց ծառայությունների համար, որպես կանոն, վճարում է գործատուն և ոչ թե աշխատողը:

Գայանեն ինտերնետում գտավ մի գործակալություն, որն ինչպես իրեն թվաց, վստահություն էր ներշնչում և ուղարկեց այնտեղ իր ռեզյումեն:

Պատենտ ստանալու համար Գայանեն դիմեց միգրացիոն ծառայություն՝ ըստ բնակության (միգրացիոն հաշվառման) վայրի: Նա ներկայացրեց դիմում, երկու լուսանկար, անձնագիր, միգրացիոն քարտ՝ մուտքի և միգրացիոն հաշվառման (երկրորդը պարտադիր չէ) նշումներով:

! Պատենտն իրավունք է տալիս աշխատել միայն այն տարածաշրջանում, որտեղ այն տրված է, սակայն այն կարող է տրվել ցանկացած տարածաշրջանում՝ անկախ նրանից, թե որտեղ է օտարերկրյա քաղաքացին կանգնեցված միգրացիոն հաշվառման:

Պատենտը չի կարող օգտագործվել կազմակերպություններում, անհատ ձեռնարկատերերի մոտ աշխատելու համար կամ գործատուի (պատվիրատուի) ձեռնարկատիրական գործունեության նպատակներով:

Պատենտի հիման վրա կարելի է աշխատել աշխատանքային կամ քաղաքացիաիրավական պայմանագրով:

10 օր անց, անձնագիրը և եկամտահարկի երեք ամսվա կանխավճարի անդորրագիրը ներկայացնելուն պես՝ նա ստացավ պատենտը: Միգրացիոն ծառայության աշխատակիցը բացատրեց.

– Պատենտի հիման վրա կարող եք աշխատել միայն այս շրջանում (տարածք, համայնք), միայն ֆիզիկական անձանց՝ Ռուսաստանի քաղաքացիների մոտ, միայն գործատուի անձնական կամ տնային պահանջների նպատակներով: Երեք ամիս անց կարող եք երկարացնել պատենտը՝ առանց դիմելու Ռուսաստանի ԴՄԾ, միայն հարկային կանխավճարն անելուց հետո:

! **Պ**ատենտը կարելի է ստանալ ոչ ավել, քան **տարին 1 անգամ**: Պատենտը պլաստիկ քարտ է, տրվում է մեկ անգամ, սակայն ուժի մեջ է հարկի վճարման անդորրագրերի առկայության դեպքում:

Հարկը կարելի է վճարել մի քանի անգամ՝ կանխավճարով, **1-ից երեք ամիս** ժամկետով: Պատենտի գործողության ընդհանուր ժամկետը չի կարող գերազանցել **12 ամիսը՝** տրման ամսաթվից սկսած: Անդորրագրում նշվում է հիմքը՝ «Ֆիզիկական անձանց եկամտահարկ՝ հաստատագրված կանխավճարի տեսքով»: Յուրաքանչյուր շրջան ունի վճարման իր ստացողը՝ ԴՎ-ն, և իր հաշվարկային հաշիվը: Վճարման հանձնարարականի ռեկվիզիտները ճշտեք բանկում կամ Ռուսաստանի ԴՄԾ տարածքային մարմնում:

Պատենտի համար վճարը ֆիզիկական անձանց եկամտահարկի կանխավճարն է: Այն կազմում է ամսական **1000 ՌԴ ռուբլի:** 2012թ. այդ գումարը կաճի:

Պատենտը և վճարման անդորրագիրը հիմք են հանդիսանում ժամանակավոր բնակության համար: Եթե պատենտը չի երկարացվել, օտարերկրյա քաղաքացին պարտավոր է **15 օրվա ընթացքում** լքել երկիրը:

Ո՞ր պայմանագիրն է ավելի լավ

Երեկոյան Բագրատը, Գայանեն և Վահեն հավաքվեցին Մարիա Իվանովնայի խոհանոցում և սկսեցին քննարկել, թե գործատուի հետ պայմանագրի որ տեսակն է ավելի լավ՝ աշխատանքային թե քաղաքացիաիրավական:

-Աշխատանքային պայմանագրով աշխատողը առավելագույնս պաշտպանված է, նրա վրա տարածվում են աշխատանքային օրենսգրքի դրույթները, քանի որ նրա աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են աշխատանքային օրենսգրքով,- հայտարարեց Վահեն, որն արդեն գտնվում էր աշխատանքային հարաբերություններում:

-Իսկ իմ գործատուն կապալի պայմանագիր է կնքել ինձ հետ, չնայած ես աշխատում եմ որպես սովորական աշխատակից,- պատասխանեց Բագրատը:

-Սակայն քեզ աշխատանքից հեռացնելը շատ ավելի հեշտ է,- զգուշացրեց Մարիա Իվանովնան, որը 35 տարի աշխատել էր կադրերի բաժնում,- իսկ եթե քեզ չվճարեն, ապա գանգատվել չես կարող: Միայն դատարան կարող ես դիմել:

-Ինչ վերաբերվում է պատենտով աշխատանքին՝ ծառայությունների մատուցման պայմանագիրն ավելի գերադասելի է,- հակադրվեց Գայանեն,- քաղաքացիների համար ավելի հեշտ է կնքել այդպիսի պայմանագիր, քան աշխատանքային:

! Օտարերկրյա աշխատողը կարող է աշխատել Ռուսաստանի Դաշնությունում աշխատանքային կամ քաղաքացիաիրավական պայմանագրի հիման վրա: Պայմանագրի տեսակի ընտրությունը կախված է աշխատանքի բնույթից: Եթե աշխատանքն ունի կրկնվող գործողությունների բնույթ, վճարվում է ամսական, գործատուն որոշում է կայացնում աշխատանքի կատարման կարգի, միջոցների և մեթոդների մասին, ապա դրանք հանդիսանում են աշխատանքային հարաբերություններ, որոնք ձևակերպվում են **աշխատանքային պայմանագրով:**

! Եթե պատվիրատուի համար իրականացվում է մեկանգամյա աշխատանք, վճարումը կատարվում է աշխատանքի իրականացման արդյունքների հիման վրա (միանգամից վճարելով կամ մաս-մաս), կատարողը որոշում է կայացնում կամ համաձայնեցնում է պատվիրատուի հետ աշխատանքի իրականացման հերթականությունը, ապա այդպիսի հարաբերությունները կարող են ձևակերպվել քաղաքացիաիրավական պայմանագրով:

Աշխատանքային հարաբերությունները ավելի մեծ պարտականություն են դնում գործատուի վրա, քան **քաղաքացիաիրավական պայմանագիրը**: Այդ իսկ պատճառով, շատ դեպքերում գործատուները նախընտրում են կնքել քաղաքացիաիրավական պայմանագիր, երբ հարաբերությունները աշխատանքային միտում ունեն: Քաղաքացիաիրավական պայմանագրով աշխատող անձանց վրա չի տարածվում աշխատանքային իրավունքը: Ռուսաստանի օրենսդրությամբ աշխատանքային հարաբերությունների միտում ունեցող հարաբերությունները կարգավորելու համար քաղաքացիաիրավական պայմանագիր կնքելու վրա դեռևս սահմանափակումներ չկան:

Աշխատանքային պայմանագիր

Մարիա Իվանովնան այնքան երկար էր աշխատել կադրերի բաժնում, որ կարող էր անգիր մեջբերել աշխատանքային օրենսգիրքը:

Աշխատողի համար աշխատանքային պայմանագիրը գերադասելի է, որովհետև այն գործատուին պարտավորեցնում է աշխատանքով ապահովել և աշխատավարձ վճարել նրան, ում վարձակալել է: Իսկ եթե աշխատանք չկա, ապա դա պարապուրդ է գործատուի մեղքով և վճարվում է մասնակի:

Աշխատանքային պայմանագրով վարձակալված աշխատողների հանդեպ կիրառվում են արհմիությունների հետ համաձայնեցված աշխատանքային նորմերը և ապահովվում է 40-ժամյա աշխատանքային շաբաթ: Արտաժամյա աշխատանքը, որն աշխատողը կարող է կատարել միայն իր համաձայնությամբ, վճարվում է հավելյալ: Հանգստյան կամ տոն օրերին աշխատանքը վարձատրվում է կրկնակի չափով:

Գործատուն պարտավոր է ապահովել անվտանգ աշխատանքային պայմաններ, տրամադրել կոլեկտիվ և անհատական պաշտպանության միջոցներ: Իսկ արտադրությունում դժբախտ պատահարի կամ մասնագիտական հիվանդության դեպքում աշխատողները վճարվում են սոցիալական ապահովագրման Ֆոնդից:

Յուրաքանչյուր ձեռնարկությունում պետք է կնքված լինի կոլեկտիվ պայմանագիր, որի դրույթները պետք է տարածվեն բոլոր աշխատողների վրա՝ և ռուս և օտարերկրացի: Աշխատանքային իրավունքների խախտման դեպքում կարելի է դիմել աշխատանքի տեսչություն կամ դատարան:

Անշուշտ, կարգ ու կանոնը պետք է պահպանել, ներքին կանոնակարգին հետևել, աշխատանքից չուշանալ, ալկոհոլ չօգտագործել աշխատանքային ժամերին:



! Աշխատանքային պայմանագիրը կնքվում է այն դեպքում, երբ աշխատողը ամեն օր կատարում է միևնույն աշխատանքային գործառույթները կամ պաշտոնի պարտականությունները: Դրանց իրականացման համար աշխատողը ամսական աշխատավարձ է ստանում, որը որոշվում է դրույքաչափով կամ սակագնային դրույքների և հավելավճարների հիման վրա: Աշխատողը ենթարկվում է ներքին կանոնակարգին, աշխատում է սահմանված ժամերին, կատարում է գործատուի նորմատիվ ակտերի պահանջները:

Օտարերկրյա քաղաքացիների հետ միշտ կնքվում է ժամկետային աշխատանքային պայմանագիր (Ռուսաստանի Դաշնություն մտնելու պահից **մեկ տարուց ոչ ավելի** ժամկետով):

Աշխատանքային պայմանագրում նշվում է աշխատողի մասին տվյալները, աշխատանքի անցնելու ամսաթիվը և գործունեության ժամկետը, աշխատավայրը, աշխատանքային գործառույթը (պարտականություններն ըստ պաշտոնի), աշխատավարձի վճարման պայմանները (սակագնային դրույքը, հավելավճարը), աշխատաժամերի ռեժիմը, փոխհատուցում ծանր աշխատանքի և աշխատանքի համար վնասակար և վտանգավոր պայմաններում աշխատելու դիմաց, աշխատանքի բնույթը (շարժուն, արտագնա, ճանապարհային), աշխատողի պարտադիր սոցիալական ապահովագրման վերաբերյալ պայմաններ:

Աշխատավարձի չափը չի կարող ցածր լինել աշխատանքի դիմաց տրվող նվազագույն աշխատավարձից (4330 ՌԴ ռուբլի ամսական) կամ Ռուսաստանի Դաշնության սուբյեկտում հաստատված նվազագույն աշխատավարձից: Դրանք պարբերաբար ենթարկվում են ինդեկսացիայի:

Աշխատանքային պայմանագրում կարող է նախատեսված լինել փորձաշրջան (մինչև 3 ամիս): Աշխատանքային պայմանագիր կնքելիս աշխատանքի ընդունումը ձևակերպվում է հրամանով, ինչպես նաև գրանցում է կատարվում ռուսական աշխատանքային գրքույկում:

Աշխատանքային գրքույկի բացակայության պարագայում գրանցումները կատարում է գործատուն:

Քաղաքացիաիրավական պայմանագիր

-Ինչո՞վ է տարբերվում քաղաքացիաիրավական պայմանագիրը աշխատանքայինից:

-Քաղաքացիաիրավական պայմանագիրը, որպես կանոն, կնքվում է որոշակի ծավալի աշխատանք կատարելու կամ որոշակի ծառայությունների մատուցման համար: Այդ աշխատանքների իրականացման, ինչպես նաև մատուցված ծառայությունների արդյունքները պետք է հնարավորինս հստակ և մանրամասն նկարագրված լինեն պայմանագրում:

-Այսինքն, եթե ես կահույք եմ հավաքում, ապա աշխատանքային պայմանագրում գրված կլինի «կահույքի հավաքում», իսկ կապալի պայմանագրում՝ «պահարանի և սեղանի հավաքո՞ւմ»:

-Մոտավորապես այդպես: Եվ պայմանագիրը ստորագրում է նա, ում համար դու պահարան կամ սեղան ես հավաքում: Նա կոչվում է «պատվիրատու»:

-Իսկ աշխատավարձը պայմանագրում նույնպես նշվո՞ւմ է:

-Քաղաքացիաիրավական պայմանագրի համար գոյություն չունեն այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են «աշխատանքային ժամ» և «աշխատավարձ»: Պայմանագրում որոշվում է աշխատանքի արժեքը և կատարման ժամկետը: Անհրաժեշտության դեպքում՝կատարման ժամկետը կարող է լինել փուլային:



-Իսկ ո՞վ է որոշում կատարման ժամկետը:

-Կողմերն ըստ պայմանավորվածության: Քաղաքացիաիրավական պայմա-նագրի համաձայն, կատարողը իր վրա պարտականություններ ստանձնելով, պետք է գիտակցի, որ իր վրա է վերցնում աշխատանքի չկատարման հետ կապված ռիսկերը: Իրականացման ժամկետների մասին պայմանավորվելիս պետք է իրատեսորեն գնահատես քո հնարավորությունները, աշխատանքի արժեքի մասին պայմանավորվելիս՝ հստակ որոշես վճարման փուլային տարբերակը:

-Իսկ եթե ժամկետների հարցում ուշացումներ լինեն կամ պատվիրատուն մոռանա վճարե՞լ:

-Դրա համար պայմանագրում ընդգրկվում են դրույթներ կողմերի պատասխանատվության վերաբերյալ, աշխատանքի կատարման կամ վճարի ուշացման դեպքում տուգանքի վճարման, վեճերի լուծման կարգի վերաբերյալ:

! Քաղաքացիաիրավական պայմանագրի հիմնական տեսակներն են՝ կապալի պայմանագիրը փոխհատուցվող ծառայությունների մատուցման պայմանագիր, գործակալային պայմանագիր:

Կապալի և փոխհատուցվող ծառայությունների մատուցման պայմանագրերը՝ աշխատանքային գործունեության համար կարող են կնքվել ֆիզիկական անձի հետ պատենտի հիման վրա:

Ըստ քաղաքացիաիրավական պայմանագրի՝ մի կողմը պարտավորվում է մյուս կողմի հանձնարարությամբ կատարել որոշակի աշխատանք կամ մատուցել որոշակի ծառայություններ կամ նրա անունից գործողություններ իրականացնել, իսկ մյուս կողմը պարտավորվում է ընդունել աշխատանքի արդյունքը (մատուցված ծառայությունը) և վճարել դրա դիմաց:

Օտարերկրյա աշխատողը, որ կնքել է քաղաքացիաիրավական պայմանագիր, ինքնուրույն է կատարում ստանձնած պարտականությունները: Նրա վրա չեն տարածվում ներքին կանոնակարգը:

Աշխատանքի արդյունքում թերություններ գտնելու դեպքում պատվիրատուն իրավունք ունի պահանջել աշխատանքի անհատույց կրկնություն կամ փոխհատուցում իր կատարած ծախսերի դիմաց՝ թերությունները շտկելու համար:

Քաղաքացիաիրավական պայմանագրի պարտականությունների կատարման վերաբերյալ վեճերը լուծվում են միայն դատարանի միջոցով:

Աշխատանքի թույլտվության երկարացում

Արդեն երկու ամիսն անցել է, և Բագրատի աշխատանքի թույլտվության ժամկետը շուտով կավարտվի: Այդ ժամկետը լրանալուց առնվազն 15 օրը առաջ նա պետք է երկարացնի այն:

Նա դիմում գրեց աշխատանքի թույլտվությունը երկարացնելու համար: պատրաստեց փաստաթղթերը՝ անձնագիրը, քաղաքացիաիրավական պայմանագիրը, բժշկական եզրակացությունը թմրամոլության, ինֆեկցիոն հիվանդությունների, ՄԻԱՎ-ի հարուցիչի բացակայության մասին, միգրացիոն քարտը և ժամանման մասին քարտը:

Բացի այդ, նրանից պահանջվեց լրացնել մի ձև՝ «Տեղեկագիր աշխատանքի թույլտվության հիման վրա օտարերկրյա քաղաքացու կողմից իրականացվող աշխատանքային գործունեության տեսակների և կատարման մասին»:

! Աշխատանքի թույլտվության երկարացումը կատարվում է **3 օրվա** ընթացքում՝ առանց հաշվի առնելով քվոտաները:

Սակայն, դիմումը և բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը պետք է ներկայացվեն միգրացիոն ծառայություն ժամկետը սպառվելուց **15 օր առաջ**:

Երկարացումը կարող է մերժվել միայն օրենքով նախատեսված հիմքերով:

-Ի՞նչ է ՕԿՊԴՏՐ-ն,- զարմացավ նա,- պետք է տան տիրուհուց հարցնել:

-ՕԿՊԴՏՐ-ն Աշխատողների մասնագիտությունների, ծառայողների պաշտոնների և սակագների համառուսաստանյան դասակարգիչն է,- բացատրեց Մարիա Իվանովնան,- իսկ ՕԿ-010-93-ը Զբաղմունքների համառուսաստանյան դասակարգիչն է, բայց մեզ հարկավոր է դրանցից միայն մեկը՝ մասնագիտությունների դասակարգիչը:

Նա գրապահարանից հանեց մի մեծ հատոր և հարցրեց.

-Ինչպե՞ս են քեզ՝ պայմանագրում կոչել:

-Ոչ մի ձևով,- պատասխանեց Բագրատը,- ի տարբերություն աշխատանքայինի, քաղաքացիաիրավական պայմանագրում չի նշվում ոչ մասնագիտությունը, ոչ էլ պաշտոնը:

- Ճիշտ է: Իսկ դու ինչպե՞ս կանվանեիր քեզ քո աշխատանքային գործունեության բնույթի համաձայն:

- Տեղեկատվության պաշտպանության ինժեներ:

-Հիմա կգտնենք, ահա: ՕԿՊԴՏՐ-ի ծածկագիրը 22567, ՕԿՀ-ի ծածկագիրը՝ 2131: Այդպես էլ նշիր հարցաթերթիկի մեջ:

Երեք օր անց միգրացիոն ծառայությունը երկարացրեց նրա աշխատանքի թույլտվությունը՝ պայմանագրի ուժի մեջ լինելու ամբողջ ժամկետով:

! Աշխատանքային գործունեության տեսակների մասին տվյալների ձևերի լրացման համար, որը իրականացվում է օտարերկրյա քաղաքացիների կողմից՝ իրենց ստացած աշխատանքի թույլտվության հիման վրա, անհրաժեշտ է օգտվել Աշխատողների մասնագիտությունների, ծառայողների պաշտոնների և սակագների համառուսաստանյան դասակարգչից:

Դասակարգիչը կարելի է գտնել ինտերնետում: Էլեկտրոնային ձևաչափը առավել հարմար է անհրաժեշտ կատեգորիան գտնելու համար:

Այն պարունակում է հնգանիշ ծածկագիր ՕԿՊԴՏՐ (առաջին սյունակը), մասնագիտության անվանումը (պաշտոններ), չորսանիշ թիվ 010-93 (նույն ինքը ՕԿՀ վերջին սյունակը):

Եթե մասնագիտությունը կամ պաշտոնը արտադրական են (տեղական, օգնական և այլն), ապա ծածկագրերը նշվում են ըստ հիմնական մասնագիտության (պաշտոնի):

ՕԿՊԴՏՐ-ում պաշտոնները և մասնագիտությունները այբբենական կարգով են դասավորված:

ՕԿՊԴՏՐ-ում մասնագիտությունները (առաջին բաժին) և պաշտոնները (երկրորդ մաս) այբբենական հերթականությամբ են: Եթե դուք չգիտեք, մասնագիտություն է Ձեզ մոտ, թե պաշտոն, ապա փնտրեք ամենուր:

Ռուսաստանի ԴՄԾ Աշխատողների մասնագիտությունների, ծառայողների պաշտոնների և սակագների համառուսաստանյան դասակարգչի օգտագործման հետ կապված՝ նպատակահարմար է աշխատանքային պայմանագրերում նշել մասնագիտությունը/պաշտոնը համաձայն դասակարգչի:

Բայց նույնիսկ նրանք, ովքեր աշխատում են ըստ քաղաքացիաիրավական պայմանագրի, աշխատանքի թույլտվության հանձնման դիմումի մեջ նշում են գործունեության տեսակը, մասնագիտությանը կամ պաշտոնին բովանդակությամբ ավելի մոտ անվանումը:

Պատենտի երկարացում



Պատենտի երկարացումը մեկ տարվա ընթացքում շատ հեշտ լուծվող խնդիր է: Բավական է միայն հաջորդ 1-3 ամիսների համար վճարել եկամտահարկի կանխավճարը, և ամեն ինչ պատրաստ է:

Պետք է անպայման պահել պատենտի վճարման մասին բոլոր կտրոնները, որպեսզի մեկ տարի անց կարողանաք ստանալ նորը:

Ինչպես նաև պետք է գրանցեք բոլոր տեսակի աշխատանքները, որոնք իրականացվել են այդ պատենտի ժամկետի ընթացքում:

Նոր պատենտ ստանալու ժամանակ հարկավոր է Ռուսաստանի ԴՄԾ ներկայացնել աշխատողի իրականացրած աշխատանքային գործունեության տեսակների վկայական: Դրա համար կպահանջվի նաև Աշխատողների մասնագիտությունների, ծառայողների պաշտոնների և սակագների համառուսաստանյան դասակարգիչը:

! Անհրաժեշտ է նախապես վճարել պատենտի երկարացման համար: Եթե պատենտը չի երկարացվում մինչև վերջին անգամ վճարելու օրվա հաջորդ օրը, ապա նրա գործունեության ժամկետը կավարտվի, իսկ նորը հնարավոր կլինի ստանալ միայն նախորդի ստացման օրվանից մեկ տարի անց:

Եթե պատենտի ժամկետը չերկարացվի, ապա դուք ստիպված կլինեք լքել Ռուսաստանը **15 օրվա ընթացքում:** Կտրոնում նշվում է հիմքը «Ֆիզիկական անձանց եկամտահարկի ֆիքսված կանխավճարի» տեսքով: Յուրաքանչյուր շրջան ունի իր վճարի ստացողը՝ ԴԳՎ-ն, իր հաշվարկային հաշիվը: Վճարման հանձնարարականի ռեկվիզիտները ճշտեք Ռուսաստանի խնայբանկում կամ Ռուսաստանի ԴՄԾ տարածաշրջանային մարմիններում:

Պատենտի երկարացման համար կարող են օգտագործվել հատուկ տերմինալներ՝ բնակչության վճարումների ընդունման համար:

Նոր պատենտ ստանալու համար (ոչ շուտ քան վերջինը ստանալուց մեկ տարի անց) Ռուսաստանի ԴՄԾ-ում պահանջվում է ներկայացնել կանխավճարային վճարումների մասին բոլոր կտրոնները, ինչպես նաև «Ֆիզիկական անձի մոտ օտարերկրյա քաղաքացիների կողմից իրականացվող աշխատանքային գործունեության ձևերի մասին տեղեկանքի» մասնագիտությունների և ՕԿՊԴՏՐ ու ՕԿՅ կոդերով:

Միգրացիոն հաշվառման երկարացում

Անցել է երեք ամիս, և Մարիա Իվանովնան իր տան բնակիչներին հիշեցնում է, որ նրանց միգրացիոն հաշվառման ժամկետը լրանում է:

-Ինքս գնալ չեմ կարողանա, որովհետև վատառողջ եմ: Բայց դու՛ք ինքներդ կարող եք պատրաստել փաստաթղթերը: Վահե, աշխատանքի թույլտվությունը պատժենահանի՛ր: Իսկ դու՝ Գայանե, պատենտը և հաջորդ երեք ամիսների համար վճարում կատարած կտրոնները պատժենահանի՛ր,- հանձնարարեց նա,- ինչպես նաև անձնագրերը և միգրացիոն քարտերը պատժենահանե՛ք:

Այնուհետև Մարիա Իվանովնան ստիպեց յուրաքանչյուրին գրել ժամանակավոր ժամանման ժամկետների փոփոխության մասին դիմում: Վահեին՝ մինչ պայմանագրի ժամկետի լրանալը, իսկ Գայանեին՝ պատենտի գործունեության վճարված ժամանակահատվածի համար:

-Հենց այս փաստաթղթերի հիման վրա էլ ձեր միգրացիոն հաշվառումը կերկարաձգեն: Ժամանման մասին ծանուցումները պետք է նոր լինեն: Նաև անհրաժեշտ է միջնորդագիր իմ կողմից՝ որպես ընդունող կողմ: Ահա տեղեկանք տարածքային բժշկից, որ ես վատառողջ եմ, և իմ անձնագրի պատճեն:

-Իսկ ես ինչպե՞ս երկարացնեմ միգրացիոն հաշվառումը:

- Եթե դու արդեն ունես պատենտի վճարման ստացական հաջորդ երեք ամիսների համար, - ասաց Մարիա Իվանովնան, - ապա ոչ մի բան անել հարկավոր չէ: Պատենտով աշխատողներին ոչ մի տեղ գնալ պետք չէ: Նրանց միգրացիոն հաշվառումը ավտոմատ կերպ երկարացվում է պատենտի գործողության համար վճարված ժամկետով:

! Միգրացիոն հաշվառման երկարացումը որոշակիորեն տարբերվում է առաջնային հաշվառումից: Ժամանման վերաբերյալ նոր ծանուցումից, անձնագրի և միգրացիոն քարտի պատճեներից բացի պահանջվում է աշխատանքի թույլտվության պատճենը, որը հանդիսանում է Ձեր կացության ժամկետը երկարացնելու իրավունքը հաստատող փաստաթուղթ:

Բացի այդ, անհրաժեշտ են ծանուցումների բլանկների կտրված մասերը, ընդունող կողմի՝ իր հասցեում միգրացիոն հաշվառման ժամկետի երկարացման միջնորդագիրը, դիմում Ձեր անունից՝ Ձեր կացության ժամկետի երկարացման խնդրանքով՝ նման որոշում կայացնելու հիմքերով:

Այս փաստաթղթերը **չեն ուղարկվում փոստով**, դրանք **անձամբ ներկայացվում են ընդունող կողմից:**

Վճարված պատենտի առկայության դեպքում ժամանակավոր կացության ժամկետը երկարացնելու համար միգրացիոն ծառայություն դիմել պետք չէ:

-Գայանե, քո բախտը բերեց: Արի ինձ հետ, հանկարծ ինձ օգնություն պետք լինի, - խնդրեց Վահեն:

Փաստաթղթերի այդ փաթեթով նրանք գնացին միգրացիոն ծառայություն, որտեղ Վահեի միգրացիոն քարտի վրա կացության երկարացման մասին նոր նշում արեցին՝:

! Ընդունող կողմի մոտ հարգելի պատճառների առկայության դեպքում (օրինակ՝ հիվանդություն) դուք ինքներդ պետք է ներկայացնեք նշված փաստաթղթերը Ռուսաստանի ԴՄԾ: Ընդ որում, պետք է անպայման կցել ընդունող կողմի անձնագրի պատճեն և հարգելի պատճառը հաստատող փաստաթուղթը (օրինակ՝ բժշկի տեղեկանք):

Ռուսաստանի ԴՄԾ-ում միգրացիոն քարտի վրա կդնեն նոր կնիք՝ կացության երկարացման համար, և ձեզ կվերադարձնեն ժամանման մասին նոր ծանուցման կտրված հատված՝ միգրացիոն հաշվառման նշումով:

Արձակուրդ մեկնելը

Անցել է կես տարի, ինչ Ազատը եկել է Ռուսաստան և սկսել աշխատել գործարանում:

Մի անգամ նրան զանգահարեց տատիկը և ասաց, որ նա պետք է շտապ տուն վերադառնա՝ նա տղա է ունեցել:

Ազատը վազեց արտադրամասի պետի մոտ՝ կարճատև արձակուրդ խնդրելու համար:

-Շնորհավորում եմ, Ազատ,- ասաց արտադրամասի պետը: – Դու լավ աշխատող ես: Դիմում լրացրու՝ 14 օրացուցային օրվա համար և տար այն կադրերի բաժին:

-Արձակուրդի մասին հրամանը կպատրաստենք,- պատասխանեցին անձնակազմի ղեկավարման գծով ծառայությունում՝ ԴՄԾ-ում Ձեզ կհանեն միգրացիոն հաշվառումից: Երբ վերադառնաք, կբերեք նոր միգրացիոն քարտ և անձնագիր:

-Ախր ես երկար ժամանակով չեմ մեկնում,- զարմացավ Ազատը,- միգուցե պե՞տք չէ հանել:

– Սահմանահատումը կամրագրվի և տվյալները կուղարկվեն Ռուսաստանի ԴՄԾ: Երբ վերադառնաք, Ձեզ նորից կհաշվառենք:

! Ռուսաստանից ժամանակավոր դուրս գալու անհրաժեշտության դեպքում զգուշացրեք դրա մասին ընդունող կողմին՝ բնակարանի տիրոջը կամ գործատուին, ում մոտ դուք գտնվում եք միգրացիոն հաշվառման: Վերադառնալուն պես անհրաժեշտ է կրկնել առաջին անգամ միգրացիոն հաշվառման կանգնելու ամբողջ գործընթացը:

Գործուղում

Բագրատին աշխատավայրից հարեվան շրջան ուղարկեցին գործուղման՝ տեղեկատվության ապահովության խնդիրների թեմայով սեմինարին մասնակցելու համար: Նրա համար հյուրանոցում նախապես համար էր պատվիրված՝ երեք օրվա համար:

Հյուրանոցում տեղավորվելու ժամանակ ադմինիստրատորը, իմանալով, որ նա օտարերկրյա քաղաքացի է, խնդրեց նրա միգրացիոն քարտը:

-Բայց ես արդեն միգրացիոն հաշվառման մեջ եմ այն վայրում, որտեղ բնակվում եմ,- զարմացավ Բագրատը,- ինչի՞ համար ինձ երկրորդ անգամ կանգնեցնել, եթե ես եկել եմ ընդամենը երեք օրով:

-Այդպիսին են կանոնները,- պատասխանեց ադմինիստրատորը,- մենք պարտավոր ենք ծանուցել միգրացիոն ծառայությանը ձեր ժամանման մասին մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

! Եթե Ձեզ ուղարկում են ծառայողական գործուղման, ապա շատ կարևոր է հիշել, որ աշխատել այն շրջանից դուրս, որտեղ Ձեզ հանձնել են աշխատանքի թույլտվությունը, կարող եք միայն հաստատված ցուցակում ներառված մասնագիտություններով: Այս օրենքը չի սահմանափակում ուրիշ շրջան այլ նպատակով (օրինակ՝ որակավորման բարձրացում կամ հանգստ) գնալու Ձեր իրավունքը:

Եթե դուք փոխում եք Ձեր բնակության վայրը Ռուսատանում կամ ուղակի մի քանի օրով մեկնում եք ուրիշ քաղաք, ապա դա կանդրադառնա Ձեր միգրացիոն հաշվառման վրա:

Կացության նախկին վայրից միգրացիոն հաշվառումից դուրս գալը տեղի կունենա ավտոմատ կերպով, երբ միգրացիոն ծառայության կողմից ստանաք ժամանման մասին նոր ծանուցում:

-Բայց ինձ չեն հանել միգրացիոն հաշվառումից Մարիա Իվանովնայի մոտից: Ի՞նչ է լինելու հիմա: Տուգա՞նք:

-Ոչ մի նման բան,- հանգստացրեց նրան աղջիկը,- քանի որ դուք չեք լքել Ռուսաստանի տարածքը, ապա ընդունող կողմը տեղափոխման մասին ծանուցել պարտավոր չէ: Վերադառնալուն պես Ձեզ կկանգնեցնեն միգրացիոն հաշվառման նույն վայրում, ինչպես նախկինում:

! Եթե դուք պետք է տեղափոխվեք հյուրանոց, հանգստյան տուն կամ առողջարան, ապա ադմինիստրացիան կծանուցի ժամանման մասին **մեկ աշխատանքային օրվա ընթացքում,** իսկ եթե դուք որոշեք ապրել վարձակալված տանը կամ բնակավայրում, ապա Ձեզ պետք է միգրացիոն հաշվառման կանգնել ոչ ուշ քան ժամանումից հետո **7 օրվա ընթացքում:**

Եթե Ձեզ կանգնեցրել են միգրացիոն հաշվառման հյուրանոցում, առողջարանում կամ հանգստյան տանը, ապա վերադառնալուն պես ընդունող կողմը պետք է կրկնի միգրացիոն հաշվառման կանգնելու ամբողջ գործընթացը:

Եթե գործատուն հեռացրել է աշխատանքից

Վահեի մոտ տհաճություններ եղան: Ընկերությունը, որտեղ նա աշխատում էր, մեծ կորուստներ ունեցավ և որոշեցին աշխատակիցների թիվը կրճատել: Ինչպես միշտ, առաջին հերթին նրանք շտապեցին աշխատանքից ազատել ցածր որակավորմամբ աշխատողներին:

-Իսկ իմ աշխատանքի թույլտվությո՞ւնը: Հիմա դա չեղյա՞լ են հայտարարելու,- հարցրեց Վահեն կադրերի բաժնի աշխատակցուհուն, որը հայտնել էր նրան վատ լուրը:

-Ամեն ինչ կորած չէ, եթե դուք երկու շաբաթվա ընթացքում նոր աշխատանք գտնեք, ապա կկարողանաք մնալ Ռուսաստանում: Մտեք ուրիշ կահույքի խանութներ: Թույլտվության առկայության դեպքում Ձեզ միանգամից աշխատանքի կընդունեն:

-Դու ունես վարորդական իրավունք, այնպես չէ՞: Հարևան խանութում էլ հենց վարորդի կարիք ունեն,- ասաց Սեմյոնը, ում հետ նրանք մոտ ութ ամիս կահույք էին առաքում հաճախորդների համար: Վահեն հենց այդպես էլ արեց:

-Յոթ օրվա ընթացքում պետք է տեղեկացնեք Ռուսաստանի ԴՄԾ, որ նոր պայմանագիր եք կնքել: Այդ դեպքում նրանք փոփոխություններ կանեն թույլտվության մեջ:

! Եթե Ձեր գործատուն կամ պատվիրատուն ժամկետից շուտ խզել է պայմանագիրը, կամ եթե դուք ցանկացել եք փոխել աշխատավայրը մինչ պայմանագրի ժամկետի լրանալը, ապա նոր աշխատանքի տեղավորվելու համար դուք ունեք 15 օր:

Եթե դուք չհասցնեք նորից աշխատանքի տեղավորվել, ապա ստիպված եք լքել Ռուսաստանը կամ պատենտ ձեռք բերել:

Կարելի է կնքել նոր պայմանագիր և աշխատել ուրիշ մասնագիտությամբ, սակայն նույն շրջանում: **7 աշխատանքային օրվա** ընթացքում դուք պարտավոր եք անձամբ դիմել Ռուսաստանի ԴՄԾ աշխատանքի թույլտվության մեջ տվյալների փոփոխման համար:

Եթե նոր պայմանագրի ժամկետը գերազանցում է ավելի վաղ Ձեզ տրված աշխատանքի թույլտվության ժամկետը, ապա այն կերկարացվի, բայց Ռուսաստանի Դաշնություն մուտք գործելուց մեկ տարուց ոչ ավել ժամկետով:

Հաշվենք հարկերը

Բագրատն ունի բարձրագույն կրթություն, նա սովորել է Ռուսաստանում, այդ իսկ պատճառով նա շատ բան գիտի ռուսական օրենսդրության վերաբերյալ: Մի օր երեկոյան նա ասաց.

-Վահե, դու կես տարուց ավել է, ինչ Ռուսաստանում ես: Դա նշանակում է, որ դու արդեն բնակիչ ես, և եկամտահարկը քեզանից վերցնում են 13 տոկոս, 30-ի փոխարեն:

-Իսկ ես մտածում էի, որ իմ աշխատավարձը բարձրացրել են իմ լավ աշխատելու համար,- զարմացավ նա,- իսկ պարզվում է՝ հարկերն են կրճատել: Իսկ եթե ես տո՞ւն գնամ, ապա հետո կրկին պետք է կես տարվա համար բարձր հարկե՞ր գանձեն:

-Ոչ: Կարևորն այն է, որ դու 12 ամսվա ընթացքում 183 օր գտնվել էս Ռուսաստանում: Եթե ոչ երկար ժամանակով մեկնես, ապա կվճարես եկամտահարկը որպես Ռուսաստանի քաղաքացի:

-Իսկ մենք՝ պատենտով աշխատողներս, հարկը ֆիքսված թվով ենք մուծում՝ 1000 ռուբլի,- ասաց Գայանեն,- բայց մեր հարկերը 13 տոկոսով են հաշվում առաջին իսկ օրվանից:

! Եթե դուք փաստացի 12 իրար հաջորդող ամիսների ընթացքում 183 օրացուցային օր գտնվում եք Ռուսաստանի Դաշնությունում, ապա կարող եք վճարել ֆիզիկական անձանց եկամտահարկ 13 տոկոս դրույքաչափով: Գտնվելու ժամանակահատվածը կարող է ընդհատվել, սակայն օրերի գումարային քանակը՝ ներառյալ ժամանման և մեկնման օրերը, պետք է 183 օրվանից պակաս չլինի: Հաշվի է առնվում ցանկացած անընդհատ 12-ամսյա ժամանակահատված, այդ թվում՝ սկսած մեկ օրացուցային տարվանից մինչև հաջորդ տարին:

Եթե դուք աշխատում եք պատենտով, ապա եկամտահարկի դրույքաչափը կազմում է 13 տոկոս՝ առաջին իսկ օրվանից սկսած, անկախ կացության տևողությունից:

Որպես հարկային բազա՝ ընդունվում են օտարերկրյա աշխատողի բոլոր եկամուտներն՝ ըստ աշխատանքային և քաղաքացիաիրավական պայմանագրերի: Վճարված և վճարման ենթակա եկամտահարկի հաշվարկն անհրաժեշտ է, եթե դուք Ռուսաստանում գտնվում եք կես տարի և ցանկանում եք վերադարձնել ավել մուծած հարկի մասը, կամ եթե դուք աշխատում եք պատենտով:

Վճարված հարկերը հաշվելու համար նպատակահարմար է գործատուից խնդրել 2- НДФЛ ձևը: Եթե դուք աշխատում եք ֆիզիկական անձանց մոտ, ապա պայմանագրով ստացվող գումարի հաշվառումը պետք է վարեք ինքնուրույն:

Եկամտահարկի վերադարձ

-Իսկ ինչո՞ւ ես պետք է հաշվարկեմ իմ եկամտահարկը,- հարցրեց Վահեն,- գործատուն կատարում է ինձանից անհրաժեշտ պահումներն ու փոխանցում պետական բյուջե:

! Ձեր կողմից հարկային ռեզիդենտի կարգավիճակի ձեռքբերման հետ կապված հարկային գումարի վերադարձն իրականացվում է այն հարկային մարմնում, որտեղ դուք կանգնել եք հաշվառման՝ ըստ Ձեր ժամանման վայրի, հարկերի վերադարձի հայտարարագրի, ինչպես նաև հարկային ռեզիդենտի հաստատման փաստաթղթերի հիման վրա: Հարկային ռեզիդենտի կարգավիճակ պետք է ձեռք բերել ոչ ուշ, քան մեկ օրացուցային տարվա ընթացքում: Եթե դուք գտնվում եք Ռուսաստանում մեկ տարվա ընթացքում 183 օրացուցային օրից պակաս, ապա չեք կարողանա հետ ստանալ ավել վճարած հարկերը: Սակայն այդ ժամանակահատվածը հաշվարկվում է կացության ամբողջ ժամանակահատվածը որոշելու համար (օրինակ՝ դուք կարող եք ռեզիդենտի կարգավիճակ ստանալ փետրվարին կամ մարտին):

---

* Օտարերկրյա քաղաքացին իրավունք ունի դիմել կացության վայրի հարկային ծառայություն՝ որպես հարկատու հաշվառվելու համար: Դիմումի հետ միասին պետք է ներկայացնել անձնագիրը և միգրացիոն հաշվառման կանգնելու հաստատող փաստաթուղթը:

-Չեմ կասկածում, որ պահումները ճիշտ են,- պատասխանեց Բագրատը,- բայց կես տարվա ընթացքում դու վճարում էիր եկամտահարկը 17 տոկոսով ավելի շատ, քան հիմա, երբ դարձել ես բնակիչ: Դու իրավունք ունես վերադարձնել ավել վճարած եկամտահարկը:

-Եթե 6 ամիսը բազմապատկենք 17 տոկոսով, դա մի ամբողջ աշխատավարձ կկազմի,- հաշվեց Վահեն,- և գործատուն դա ի՞նձ կվերադարձնի:

-Ոչ թե գործատուն, այլ դու ինքդ պետք է դիմում գրես հարկային ծառայություն,- շարունակեց Բագրատը,- բայց դա անել հնարավոր է միայն հաջորդ տարվա սկզբին՝ հարկային հայտարարագիրը հանձնելու ժամանակ:

-Իսկ ինձ մոտ, եթե եկամտահարկի գումարը, որը ենթակա է վճարման, կանխավճարից պակաս է, ապա գումարը չեն վերադարձնում,- ավելացրեց Գայանեն,- բայց բոլորը պետք է հաշվեն իրենց հարկերը:

! Օրացույցային տարին ավարտվելուն պես, եկամուտների հայտարարագրի հետ միասին, դուք կարող եք դիմում ներկայացնել՝ ավել վճարված եկամտահարկից գումարը վերադարձնելու համար: Դրա համար անհրաժեշտ է, որ դուք ինքներդ հաշվարկեք բարձր տոկոսադրույքով վճարված գումարը: Ֆիզիկական անձանց եկամուտների մասին տեղեկանքի հիման վրա (2-НДФЛ ձևը), 30 տոկոսով հարկված գումարը, պետք է բաժանել 100-ի և բազմապատկել 17-ով: Ստացված գումարը ավել մուծած հարկն է, որը ենթակա է վերադարձի:

Դիմումի հետ միասին պետք է ներկայացնել անձնագիրը և Ռուսաստանի Դաշնություն Ձեր ժամանման մասին հաստատող փաստաթուղթը՝ միգրացիոն քարտը, հին միգրացիոն քարտերի և անցաթղթերի պատճենները կամ տեղեկանք աշխատավայրից՝ պատրաստած ըստ աշխատաժամերի հաշվարկի:

Եթե դուք վարձավճարով աշխատում եք ֆիզիկական անձանց մոտ պատենտի հիման վրա, ապա ավել վճարված կանխավճարների վերադարձի հնարավորությունը նախատեսված չէ:

Հարկային հայտարարագիր

-Իսկ հարկային հայտարարագիր պարտադիր է ամեն տարի՞ ներկայացնել,- հարցրեց Վահեն:

-Ոչ,- պատասխանեց Բագրատը,- միայն այն դեպքում, երբ պետք է վերադարձնել ավել վճարված հարկերը կամ եթե քո աշխատավարձից բացի ունես եկամուտ: Իսկ նրանք, ովքեր աշխատում են պատենտով, պետք է հաշվառեն եկամուտները, եթե եկամտահարկի գումարը, որը ենթակա է վճարման, գերազանցում է կանխավճարային գումարը:

-Այսինքն, ես պետք է հարկային հաշվետվության դիմեմ, եթե 12 ամիսների ընթացքում իմ եկամուտները գերազանցել են 92 հազար ռուբլի՞ն,- ճշտեց Գայանեն:

-Կամ մեկ տարուց պակաս ժամանակահատվածի համար՝ ամիսը 7700 ռուբլի հաշվարկով,- հաստատեց Բագրատը,- 13 տոկոսից պակասող գումարը պետք է վճարել:

! Հարկային հայտարարագիրը ներկայացվում է ոչ ուշ, քան հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 30-ը, կամ ավելի շուտ, եթե դուք աշխատում եք պատենտով և պլանավորում եք երկրից մեկնել մինչև տարվա վերջ:

Եթե դուք պատենտով աշխատել եք 2010թ. հուլիսից մինչև 2011թ. հունիսը, ապա 2010թ համար հայտարարագիրը պետք է ներկայացնել մինչև 2011թ. ապրիլի 30-ը, իսկ 2011թ. հունվար-հունիս ամիսների համար՝ մինչև Ռուսաստանից մեկնելը: Պատենտով աշխատողները պարտավոր են ներկայացնել հայտարարագիր, եթե փաստացի ստացված եկամտից հանած հարկի ընդհանուր գումարը գերազանցում է հարկային ժամանակահատվածում ֆիքսված կանխավճարների գումարը (օրացուցային տարի), կամ պատենտը չեղյալ է հայտարարված կանոնադրության համաձայն:

Հարկային հայտարարագրերով հաշվարկված հավելյալ հարկերի վճարումը իրականացվում է հայտարարագիրը ներկայացնելուց հետո **15 օրացույցային օրից ոչ ուշ:**

Մեկնելուց առաջ

Անցել է մոտ մեկ տարի: Վահեի մոտ ավարտին է մոտենում աշխատանքային պայմանագրի ժամկետը, իսկ Գայանեի մոտ՝ պատենտի գործողության ժամկետը: Եկել է տուն վերադառնալու ժամանակը:

-Կայցելենք ծնողներին և կվերադառնանք,- ասում են նրանք Մարիա Իվանովնային,- դուք մեր սենյակը պահեք 3-4 շաբաթով:

! Պատենտի ժամկետի լրանալուց հետո **15 օրվա** ընթացքում օտարերկրյա քաղաքացին համարվում է Ռուսաստանի Դաշնությունում օրինական գտնվող անձ: Նրանց համար, ովքեր աշխատում են աշխատանքի թույլտվության հիման վրա, այդպիսի ժամկետ նախատեսված չէ: Նրանք պետք է ժամանակին դուրս գան Ռուսաստանի Դաշնության տարածքից:

Պատժենահանեք այն փաստաթղթերը, որոնք պետք է վերադարձնեք՝ միգրացիոն քարտերը, ժամանման մասին ծանուցման բլանկի Ձեր հատվածը: Պահպանեք ճանապարհորդական փաստաթղթերը, դրանք կարող են օգտակար լինել, եթե հաջորդ անգամ պահանջվի հաստատել հարկային ռեզիդենտի կարգավիճակը (օրինակ՝ նոր գործատուի մոտ):

Վերադարձ տուն

Օդանավակայանում Վահեն և Գայանեն հանդիպեցին Ազատին: Նա նույնպես տուն էր թռչում:

-Ազատ, իսկ դու գիտե՞ս, որ 90 հազար ռուբլուց ավելի գումարը պետք է հայտարարագրել,– հարցրեց նրան Վահեն:

-Ես իմ աշխատավարձը ամեն ամիս տուն էի ուղարկում,- պատասխանեց Ազատը,- այդ պատճառով թեթև եմ գնում:

-Մեր ամբողջ գումարը բանկում է: Մենք որոշեցինք վերադառնալ մեկ ամսից,-ասաց

Գայանեն, - կշարունակենք աշխատել Ռուսաստանում:

Եթե գիտես և հետևում էս միգրացիոն օրենքներին, ապա այստեղ լիովին կարելի է ապրել:

Եվ նրանք երեքով ուղևորվեցին թռիչքի:

! Ռուսաստանի Դաշնության տարածքը լքելիս ներկայացրեք անձնագիրը և չմոռանաք վերադարձնել միգրացիոն քարտը: Պահպանեք աշխատանքային և բժշկական գրքույկները մինչև հաջորդ անգամ Ռուսաստան գալը, եթե դրանք Ձեզ տրվել էին:

Առանց մաքսային հայտարարագրման Ռուսաստանից կանխիկ կարող է դուրս հանվել ոչ ավելի, քան 3000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար:

Չի թույլատրվում միաժամանակ դուրս հանել ԱՄՆ 10.000 դոլարը գերազանցող գումար (ռուբլով կամ այլ արժույթով):

Գումարը պահելու և փոխանցելու համար օգտվեք բանկային ծառայություններից: Իմացեք, թե որ խոշոր բանկերն ունեն մասնաճյուղեր և Ռուսաստանում, և Ձեր երկրում, որպեսզի խնայեք գումարի փոխանցման հետ կապված ծախսերը:

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելում

Բագրատն արդեն մի քանի օր էր, ինչ բարձր տրամադրություն ուներ: Նրան շուտվանից դուր էր գալիս Մաշան՝ ընկերության մարքեթինգի բաժնից: Վերջերս տեղի ունեցած կորպորատիվ խնջույքի ժամանակ նա պարի հրավիրեց Մաշային, և նրանք պարեցին ամբողջ երեկոյի ընթացքում: Վաղը նրանց առաջին հանդիպումն է:

-Անհանգստանո՞ւմ ես,– զգաց Վահեն,- որտեղ եք պատրաստվում գնալ:

-Այո, մի քիչ,- պատասխանեց Բագրատը, - գնալու ենք կինոթատրոն՝ նոր ֆիլմ դիտելու, իսկ հետո, եթե չանձրևի, կցանկանայի Մաշային առաջարկել զբոսանք այգում: Հիմա այնտեղ շատ լավ է, շատ ծաղիկներ կան: Մաշան հիանալի աղջիկ է, գեղեցիկ, միշտ ժպտում է, բարի է և հիանալի է աշխատում:

-Իսկ դու չե՞ս մոռացել պաշտպանիչ միջոցների մասին,– հարցրեց Վահեն:

-Չեմ կարծում, որ ամեն ինչ այդքան հեռուն գնա առաջին հանդիպման ժամանակ: Իսկ հետո, Մաշան այդպիսինը չէ, նա շատ լավ աղջիկ է:

Այստեղ խոսակցությանը խառնվեց Մարիա Իվանովնան:

-Բագրատ, այստեղ ամաչելու ոչինչ չկա: Իսկ պաշտպանվելու միջոցների՝ պահպանակների մասին պետք է հիշել, այդպիսին է հիմա ժամանակը:

Ցավոք սրտի, հիմա ամենալավ աղջկա մոտ էլ կարող է ՄԻԱՎ վարակ հայտնաբերվել: Դու չգիտես, թե ում հետ է նա հանդիպել մինչ քեզ հանդիպելը, և ում հետ կարող էր հանդիպած լինել նրա նախկին ընկերը:

Արտաքին տեսքից հնարավոր չէ պարզել, թե մարդը վարակված է ՄԻԱՎ-ով, թե ոչ:

! **ՄԻԱՎ**-ի խնդիրն այսօր վերաբերվում է բոլորին: Համաճարակը չի ընտրում մարդկանց ըստ սոցիալական դրության, կենսակերպի և սովորությունների և կարող է ընկնել ցանկացած մարդու օրգանիզմ: Այժմ համաճարակի տարածման աստիճանն այնպիսին է, որ ՄԻԱՎ-ով վարակված մարդիկ կան և քո քաղաքում, և քո աշխատավայրում, և, շատ հնարավոր է, քո շփման շրջապատում: Դու կարող էս իմանալ դրա մասին, բայց կարող էս նաև չիմանալ: 2010թ. վերջին Ռուսաստանում գրանցվել է ՄԻԱՎ վարակման 550000 դեպք: ՄԻԱՎ վարակով ապրողների մեծամասնությունը երիտասարդներ են: Դրանց մեկ երրորդը աղջիկներ և կանայք են: Ինչպես նաև ՄԻԱՎ-ով ապրողների մոտ մեկ երրորդը վարակվել է չպաշտպանված (առանց պահպանակ օգտագործելու) սեռական հարաբերություններից:

Համաճարակի տարածումը մեծ մասամբ տեղի է ունենում այն պատճառով, որ մեզանից շատերը կարծում են, թե վարակը իրենց դիպչել չի կարող: Արդյունքում մարդիկ դառնում են ՄԻԱՎ-դրականներ միայն այն պատճառով, որ չեն իմացել, թե ինչպես խուսափեն փոխանցումից, կամ էլ իմացել են, սակայն հարկ չեն համարել հետևել ճիշտ մոտեցմանը:

Բժիշկները պարզել են համաճարակի փոխանցման բոլոր հնարավոր ճանապարհներն ու մեխանիզմները և դրա մասին տեղեկացրել հանրությանը՝

թմրամիջոցների ներերակային ներարկում և ընդհանուր ասեղների օգտագործում.

չպաշտպանված սեռական հարաբերություններ.

փոխանցում մորից երեխային:

Յուրաքանչյուր մարդ կարող է կանխել համաճարակի տարածումը:

Առավել մանրամասն տեղեկություն կարող եք ստանալ **www.spidtrud.ru և www.stopspid.ru** ինտերնետային կայքերից:

Խտրականության և խարանի բացառում ՄԻԱՎ-ով ապրողների նկատմամբ

-Մեր աշխատավայրում շշուկներ են պտտվում, որ հավաքարար Վիտյա Պետրովը ՁԻԱՀ-ով հիվանդ է: Հեռու կմնամ նրանից, կարող է մեկ էլ վարակվեմ,- պատմում է Վահեն:

-Վահե, ես ամաչում եմ քեզանից լսել այդպիսի բառեր: Դու ինչ է, չգիտե՞ս, որ ՄԻԱՎ վարակը կենցաղային պայմաններում չի փոխանցվում, այլ՝ անմիջապես մարդու արյուն ներթափանցելու ճանապարհով,- բացատրում է Գայանեն,- դու պետք է աջակցես այդ մարդուն, այլ ոչ թե երես թեքես նրանից, առանց այն էլ նրա համար դժվար է, եթե դա ճիշտ է:

-Բայց դա սարսափելի հիվանդություն է, և մեզ, որպես միգրանտների, միշտ ստուգում են դրա համար: Իսկ եթե ես հանկարծ ինչ-որ ճանապարհով վարակվեմ նրանի՞ց: Եվ ինչո՞ւ նրան չեն ազատում աշխատանքից,- պնդում է Վահեն:



-Երբ ՄԻԱՎ-ը բացահայտեցին անցած դարի 80-ականներին, բոլորը շատ վախեցած էին, և տարբեր պետություններ տարբեր օրենքներ ընդունեցին, որոնք պետք է պաշտպանեին իրենց հիվանդության տարածումից: Այժմ իրավիճակը փոխվում է: Շատ երկրներ սկսեցին չեղյալ հայտարարել միգրանտների աշխատանքի թույլտվություն ստանալու համար ՄԻԱՎ-ի անալիզներ հանձնելը,- պարզաբանում է Գայանեն,- իսկ դու չես կարող վարակվել Վիտյայից՝ շարունակելով աշխատել և շփվել նրա հետ:

! **ՄԻԱՎ**-ը կարող է պարունակվել մարդկային օրգանիզմի միայն 4 հեղուկներում՝ արյան մեջ, սերմահեղուկում, հեշտոցային արտադրությունում, կրծքի կաթում: Հագուստի, սպիտակեղենի և սրբիչի միջոցով ՄԻԱՎ-ը չի կարող փոխանցվել: Նույնիսկ, եթե հագուստի վրա թափվել է ՄԻԱՎ պարունակող հեղուկ՝ այն արագ մահանում է արտաքին միջավայրում:

ՄԻԱՎ-ով հիվանդ մարդիկ չպետք է հեռանան աշխատանքից: Նրանք ֆիզիկապես ի վիճակի են շարունակել աշխատատել: Ժամանակակից դեղամիջոցների ժամանակին ընդունումը ապահովում է կյանքի արժանի որակ և մասնագիտական գործունեության երկար տարիներ:

Առավել մանրամասն տեղեկություններ կարող եք ստանալ

www.spidtrud.ru և www.stopspid.ru ինտերնետային կայքերից:

Հավելված 1

Ինտերնետային ցանցում տեղեկությունների ռեսուրսների հղումներ

Օրենսդրություն (օրենսգրքեր, դաշնային օրենքներ, որոշումներ)

1. «Տեղեկատու պլյուս» տեղեկատվական-իրավական համակարգի ինտերնետային տարբերակ
   http://base.consultant.ru/cons/cgi/online.cgi?req=home4*
2. «Գարանտ» իրավական համակարգի ինտերնետային տարբերակ
   http://iv.garant.ru/SESSION/PILOT/main.htm
   Գերատեսչական նորմատիվային իրավական ակտեր (հրամաններ, ռեգլամենտներ)
3. Ռուսաստանի ԴՄԾ կայք, “Օրենսդրություն“ բաժին
   http://www.fms.gov.ru/law/
4. Ռուսաստանի Առողջապահության նախարարության սոցիալ զարգացման կայք՝
   «Աշխատանքային միգրացիա» բաժին
   http://www.minzdravsoc.ru/labour/migration
   փաստաթղթերի բանկ
   http://www.minzdravsoc.ru/docs
   Ինֆորմացիոն տեղեկատու
   Հարկման փաստաթղթերի ֆորմաներ. ԴՄԾ-ի կայք
   http://www.nalog.ru, www.gnivc.ru, http://format.nalog.ru
5. Ռուսաստանի ներկայացուցչությունները արտերկրում. Ռուսաստանի ԱԳՆ կայք
   http://www.mid.ru/zu_r.nsf/straweb

---

*Որոշ փաստաթղթեր հասանելի են միայն հանգստյան օրերին կամ աշխատանքային օրերին, ժամը 20:00-24:00 ըստ Մոսկվայի ժամանակի:

Հավելված 2

Ռուսաստանի Դաշնություն մուտք գործելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցուցակ

Ադրբեջանի Հանրապետություն.

1. Ադրբեջանի Հանրապետության քաղաքացու անձը հաստատող փաստաթուղթ նոտարիուսի հաստատված թարգմանությամբ
2. ԽՍՀՄ քաղաքացու անձնագիրը՝ Ադրբեջանի Հանրապետության քաղաքացիության մասին նշումով
3. Ադրբեջանի Հանրապետության ընդհանուր քաղաքացիական անձնագիր

Հայաստանի Հանրապետություն.

–Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր

Բելառուսի Հանրապետություն.

1. Բելառուսի Հանրապետության քաղաքացու անձնագրի 1993թ. օրինակ
2. Բելառուսի Հանրապետության քաղաքացու անձնագրի 1996թ. օրինակ
3. ԽՍՀՄ քաղաքացու գործող անձնագրի 1974թ. օրինակ՝ Բելառուսի Հանրապետության քաղաքացու պատկանելիության նշումով

Ղազախստանի Հանրապետություն.

1. Ղազախստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր
2. Ղազախստանի Հանրապետության քաղաքացու անձը հաստատող փաստաթուղթ
3. Ղազախստանի Հանրապետության քաղաքացու անձը հաստատող ժամանակավոր փաստաթուղթ

Ղրղզստանի Հանրապետություն.

–Ղրղզստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր

Մոլդովայի Հանրապետություն.

1. Մոլդովայի Հանրապետության քաղաքացու արտասահմանյան անձնագիր
2. Մոլդովայի Հանրապետության քաղաքացու անձը հաստատող փաստաթուղթ
3. ԽՍՀՄ քաղաքացու ներքին օգտագործման համար անձնագիր (1974թ. օրինակ)՝ Մոլդովայի Հանրապետության քաղաքացու նշումով

Տաջիկստանի Հանրապետություն.

1. Տաջիկստանի Հանրապետության արտասահմանյան անձնագիր
2. Տաջիկստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր

ԿՈՆՏԱԿՏՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

Կազմակերպություն	Վեբկայք	Կոնտակտներ
ՀՀ տարածքային կառավարման նախարարության Միգրացիոն պետական ծառայություն	http://www.backtoarmenia.com; http://www.dmr.am	ք. Երևան, Հր. Քոչար փ. 4, 5 հարկ հեռ. (374 10) 22-58-65 էլ. փոստ՝ migration@dolphin.am
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության "Զբաղվածության պետական ծառայություն" գործակալություն	http://www.employment.am	1. ք. Աշտարակ, մարզային զբաղվածության կենտրոն, Ն.Աշտարակեցու հրապարակ հեռ. 0232-3-52-33, 0232-3-52-93 2. ք. Իջևան, մարզային զբաղվածության կենտրոն, Վասիլյան փ. 2, հեռ. 0263-3-11-39 3. ք. Երևան, Էրեբունի, մարզային զբաղվածության կենտրոն, Խորենացու փ. 213 հեռ.. (374 10) 57-47-80, (374 10) 57-46-80
Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիա - ՀԱՄԿ	http://www.hamk.am	ք. Երևան, Վազգեն Սարգսյան փ. 23/3 հեռ. (374 10)58-92-31 էլ. փոստ՝ hamk@xar.am
ՌԴ ֆեդերալ միգրացիոն ծառայության ներկայացչություն Հայաստանում	http://www.fms.gov.ru	ք.Երևան, Մանուշյան փ. 72, հեռ. (374 10) 26-00-15